

ճիւղին ուշ կամ կանուխ հայերն ալ մասնակից պիտի ըլլային: Ժէ. դարու առաջին կէսին երկու շերամապահ հայեր կը յայտնուին Վիրճինիայի մէջ զաղութի վերահսկելէն ետև վանաւորութեան տակ զործող:

«Edward Diggs, ականաւոր եւ հարուստ մարդ մը, մասնաւորաբար զործուենայ էր մետաքսամշակութեան փորձեր ընելուն մէջ: Denbigh, James գետին վրայ եւ Bellefield այժմու Williamsburg-ի մերձակաները փորձարկութեանց վայրերը էին: Ան մշտական յարեկութեան մէջ էր John Ferrer-ի եւ իր քրոջ հետ, որոնք Անգլիա կը գտնուէին եւ հաւանաբար իրեն հայթայթեցին շերամի հունար: Եւ ինքը կը յիշէ 1654-ին առաջնոյն ուղղեալ իր մէկ զբաժ նամակին մէջ, որ ինք արտադրած է 400 փառուտ խոզակ, անոնցմէ հանելով ութը փառուտի մօտ մետաքս: Որպէսզի սկսի, իր անձնական ծախքով բերած էր երկու հայեր, որոնք իրենց բնիկ երկրին մէջ բարձր համբաւ կը վայելէին (շերամարածութեան մէջ) իրենց փորձառութեան եւ վարպետութեան համար»:1)

Աւելցնենք, որ էտուարտ Տիկսի հայրը Ռուսիոյ Անգլիական դեսպանն էր եղած: Անշուշտ անոր որդին՝ էտուարտ Տիկս՝ իմացած ըլլալու էր ոչ միայն հայոց շերամարածութեան մէջ ունեցած որոշ համբաւի մասին, այլ եւ ծանօթացած ըլլալու էր այս երկու հայ շերամապահ վարպետներուն, որոնք 1654-էն առաջ ատեն մը Վիրճինիա բերած կամ բերել տուած էր իր ծախքովը:

էտուարտ Տիկսի թղթակից եւ բարեկամ ծան Ֆէրէրը, որ Անգլիա կը գտնուէր, իր բարեկամի այս յաջողութենէն տարուած, ոտանաւոր մըն ալ կը դրէ Տիկսի եւ իր երկու հայերու մասին: Թարգմանութիւնը հոս կուտամ.—

«Ամենազնիւ արժանաւոր Տիար Տիկսի, իր երկու հայերուն թուրքիայէն Վիրճինիա ժամանելուն առթիւ»:

(1) Economic History of Virginia in the Seventeenth Century.— by Philip Alexander Bruce.— New York, 1896, vol. I, p. 365.

«Բայց ազնուափայլ Տիկս կը տանի Պէլլը (Աղջիկ. հակիրթի պակասըն է որ այս ճառը կարճ կ'ընէ)  
Իր երկու հայերը թուրքիայէն զրկուած  
Այժմ են ամենէն զբաղեալները իր քաջ ձեռնարկին մէջ:  
Եւ եթէ ան կարենայ բաւական պահեստ ամբարբէլ դալ տարուան համար,  
Տասը հազար փառուտ մետաքս այն ատեն պիտի բարձրանան:  
\* \* \* \* \*  
Քաջութիւն, անվախ Տէր, Աստուծէ օգնութիւն է սուաբուած:  
Յառաջացի՛ր, դնա՛, մղէ՛ յառաջ մեծ նպատակը»:(2)

Դժբախտաբար, այս երկու հայերու մասին աւելի բան մը չենք գիտեր: Ըստ երեւոյթի, բնիկ թուրքիացի հայեր էին, քանի որ կը վկայուի անոնց անկէ եկած ըլլալը: Սակայն յիշուած չէ անոնց եկած քաղաքին անունը:

Աւելորդ չըլլայ յիշել, որ ասիկէ առաջ ալ հայեր գտնուած են Վիրճինիայի մէջ: Օրինակ, կայ յիշատակութիւնը Մարդին կամ Մարտիրոս անուն հայուն, որ Անգլիահայտակ

(2) "To the Most Noble Deserving Esquire Digges: Upon the Arrival of His Two Armenians out of Turkey into Virginia."  
"But noble Digges carries the Bell away (Lass! want of eggs made so small the essay)  
His two Armenians from Turkey sent  
Are now most busy on his brave attempt.  
And had he stock sufficient for next years  
Ten thousand pounds of silk would the appeare  
And to the skies his worthy deeds upreare.  
Courage, brave sir: sith ayde from God is sent

Proceed, go on. Drive forth thy great intent."  
(Forcel's Historical Tracts: Pamphlet called the "Reformed Virginia Silk-Worm," vol. III, pp. 34-35. Also The Armenians in America, 1919, pp. 51-59.)